ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

25.11.2022թ.

ՈՐՈՇՈՒՄ 852-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԻՍ ՔԱՂԱՔԻ ԱՐԵՎՇԱՏ 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 28 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՐՄԵՆ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՕՐԻՆԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԻՆՔՆԱԿԱՄ ԲԱՑՎԱԾ 1 ՀԱՏ ԴՌԱՆ ԵՎ 1 ՀԱՏ ՊԱՏՈՒՀԱՆԻ ՈՒ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 2021 թվականի դեկտեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-397-Ն օրենքով, 2019 թվականի դեկտեմբերի 3-ի «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» թիվ 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման կարգի 11-րդ կետի ե) ենթակետով, 13-րդ կետի ա) ենթակետով և 18-րդ կետի դ) ենթակետով, հիմք ընդունելով «Վարազդատ Առստամյան» ԱՁ-ի 2022 թվականի նոյեմբերի 21-ի թիվ Ե-13/22 եզրակացությունը, որակավորում ունեցող անձի կողմից տրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (ծածկագիր՝ 2022JKSSGS) և քննության առնելով Կարմեն Մկրտչյանի կողմից լիազորված անձ Լիլիթ Մարտիրոսյանի 2022 թվականի նոյեմբերի 9-ի դիմումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Եմ՝

1. Գորիս համայնքի Գորիս քաղաքի Արևշատ 1-ին փողոցի թիվ 28 հասցեում Կարմեն Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող հողատարածքում՝ բնակելի տանը կից ինքնակամ կառուցված (62,1քմ ներքին) 71,3քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, որը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք համարել օրինական:
2. Սահմանել, որ Կարմեն Մկրտչյանը պարտավոր է համայնքի բյուջե վճարի շինության օրինականացման համար սահմանված վճարը՝ (71,3x1422=101400) մեկ հարյուր մեկ հազար չորս հարյուր ՀՀ դրամ և օրինական բնակելի տանը ինքնակամ բացված 1 հատ դռան և 1 հատ պատուհանի համար՝ 2x10000=20000 (քսան հազար) ՀՀ դրամ:
3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարների՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ենթակա է գույքային իրավունքների պետական գրանցման:

ԱՌՈՒՇ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

2022/25/11
Ք.Գորիս